ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԱՊԱՀ ՀՈՐ ՄՈՏ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հուլիսի 23-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց Հայաստանի Հանրապետության Սոցիալական ապահովության նախարար Ռազմիկ Մարտիրոսյանին:

Հանդիպման ընթացքում խոսվեց հանրապետությունում առկա սոցիալական խնդիրների՝ մասնավորապես ընտանեկան նպաստների բաշխման, ծերերի և թոշակառուների պաշտպանվածության, ծերանոցների գործունեությանը վերաբերող հարցերի շուրջ:

Պարոն Մարտիրոսյանը, կարևորելով եկեղեցու դերը սոցիալ-բարոյական խնդիրների լուծման գործում, միաժամանակ նշեց եկեղեցու հետ այս ասպարեզում համագործակցության անհրաժեշտության մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼԵՑ ԻՏԱԼԻԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 8-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեցին Իտալիայի տրանսպորտի նախարար Տեցիանո Տրեուի գլխավորած պատվիրակությունը և Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի դեսպան Ջանկարլո Արագոնան՝ ՀՀ տրանսպորտի փոխնախարար Աշոտ Գրիգորյանի և Իտալիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Գագիկ Բաղդասարյանի ուղեկցությամբ: Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մամլո դիվանի վարիչ-տնօրեն Գերշ. Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը ողջունելով հյուրերին, գոհունակությամբ նշեց, որ հազարամյակների խորքը ձգվող Հայաստան-Իտալիա կապերը շարունակվում են նաև այսօր: Տեղապահ Սրբազանը հիշարժան համարեց այն իրողությունը, որ Վենետիկում է լույս տեսել հայերեն առաջին տպագիր գիրքը:

Անդրադառնալով Հայ և Կաթոլիկ եկեղեցիների առնչություններին, Տեղապահ Սրբազանը ափսոսանք հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի

հիվանդության պատճառով Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու պետ Հովհաննես-Պողոս Բ Պապի Հայաստան կատարելիք այցի իրականացման կապակցությամբ և հույս հայտնեց, որ նման այցելություն տեղի կունենա առաջիկայում:

Հանդիպման ավարտին իտալացի հյուրերը եղան Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի թանգարաններում, ծանոթացան Հայ Եկեղեցու մեծարժեք գործերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆՆԵՐԸ

Օգոստոսի 11-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով կոնգրեսական խմբի անդամներին: Հյուրերին ուղեկցում էր Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմոնը:

Ողջունելով հյուրերին, Տեղապահ Սրբազանը կոնգրեսականներին ներկայացրեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հիմնադրության պատմությունը՝ նշելով, որ հայ ժողովուրդն արդեն 1700 տարի վկայում է Քրիստոսին՝ Միածնաէջ Սուրբ Աթոռն ունենալով իբրև հոգևոր կենտրոն և ուղենիշ: Հանդիպման ընթացքում Ամենապատիվ Սրբազանը հանգամանորեն ներկայացրեց Հայ Եկեղեցու կրած փորձությունները՝ սկսած խորհրդային տարիներից մինչև երկրաշարժ, դարաբաղյան հակամարտությունից մինչև խորհրդային կայսրության փլուզումը:

«Փառք եմ տալիս Աստծուն, որ Հայ Եկեղեցին, հաղթահարելով այդ բոլոր փորձությունները, տեսավ Հայոց անկախ հանրապետության հռչակումը», - ասաց Տեղապահ Սրբազանը:

Ներսես արքեպիսկոպոսն ընդգծեց, որ չնայած տնտեսական ու սոցիալական դժվարություններին, հայ ժողովուրդը շարունակում է իր ստեղծագործ աշխատանքով արարել բարիքներ և Աստծո հավատքով շարժվել առաջ:

Ընդունելության և բովանդակալից մեկնաբանությունների համար պատվիրակության անունից Տեղապահ Սրբազանին շնորհակալություն հայտնեց սենատոր Կոնի Մորելան:

Հանդիպման ավարտին հյուրերը ծանոթացան Վեհարանում պահվող հայ հոգևոր մշակութային արժեքներին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մամլո դիվանի վարիչ-տնօրեն Գերշ. Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԱՄԱՐԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Օգոստոսի 9-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց Սամարայի նահանգապետ Կոնստանտին Տիտովին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին, Տեղապահ Սրբազանը փաստեց հայ և ռուս երկու քրիստոնյա ժողովուրդների դարավոր բարեկամությունը և վստահորեն նշեց, որ Քրիստոսի ծննդյան երրորդ հազարամյակի նախաշեմին այդ բարեկամությունն է՛լ ավելի կամրանա:

«Ինձ համար մեծ պատիվ է լինել հայոց հոգևոր կենտրոնում», -շնորհակալություն հայտնելով ընդունելության համար ասաց պարոն Տիտովը: Նահանգապետը դրվատանքով խոսեց Սամարայում բնակվող ավելի քան 60 հազար հայ բնակչության մասին, որոնց ջանքերով անցած տարի Սամարայում հիմք է դրվել հայկական եկեղեցու շինարարությանը:

Հանդիպմանը ներկա էին Գերշ. Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը և Ուկրաինայի Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆ ՋԵՅՄՍ ՌՈԳԱՆԻՆ

Սեպտեմբերի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ԱՄՆ կոնգրեսական Ջեյմս Ռոգանը՝ Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի օրհնությունն ստանալու նպատակով: Մեծարգո հյուրին ընկերակցում էին ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի պառլամենտի անդամ Հովարդ Քալուգյանը, Ամերիկայի Հայկական Համագումարի Լոս Անջելեսի և Երևանի գրասենյակների տնօրեններ Պիտեր Աբաջյանը և Արփի Վարդանյանը:

Տեղապահ Սրբազանը ողջունելով հյուրերին, համառոտ ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմությունը և Հայ Եկեղեցու ներկայիս առաքելության հիմնական ուղղությունները:

Նշելով, որ Կալիֆոռնիան աշխարհի հայաշատ գաղթօջախներից մեկն է, Սրբազան Հայրը կարևորեց հայ-ամերիկյան բարեկամության ամրապնդման անհրաժեշտությունը ի շահ հայկական խնդիրների արդարացի լուծման:

Հանդիպման ավարտին հյուրերը եղան Վեհարանի թանգարանում:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱԿ-Ի ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Սեպտեմբերի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց ՄԱԿ-ի Փախստականների գծով Գերագույն հանձնակատար Սադակո Օգատային և նրա գլխավորած պատվիրակությանը:

Տեղապահ Սրբազանը ողջունելով ՄԱԿ-ի ներկայացուցիչների այցը հայոց հոգևոր կենտրոն, հյուրերին ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրման պատմությունը:

Զրույցի ընթացքում խոսվեց ղարաբաղյան հակամարտության խնդիրների շուրջ: Այս առիթով Տեղապահ Սրբազանն անդրադարձավ հակամարտության հետևանքով Ադրբեջանից գաղթած բազմահազար հայ փախստականների խնդիրներին՝ նշելով, որ Հայ Առաքելական Եկեղեցին մշտապես սատարում է փախստականներին, ինչպես նաև հասարակության բոլոր կարիքավոր խավերին:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև առաջիկա կաթողիկոսական ընտրությունների, աշխարհասփյուռ հայ համայնքների և Հայ Առաքելական Եկեղեցուն վերաբերող հարցերի շուրջ:

Հանդիպման ավարտին հյուրերը եղան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարաններում, ծանոթացան Վեհարանում պահվող հայ հոգևոր-մշակութային արժեքների հետ:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մամլո դիվանի վարիչ-տնօրեն Գերշ. Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԳՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Սեպտեմբերի 8-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության պատվիրակությանը՝ նախարարի խորհրդական, հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Միշել Ֆուշեի գլխավորությամբ: Պատվիրակությանն ընկերակցում էր Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրան:

Ողջունելով հյուրերին, Տեղապահ Սրբազանը գոհունակությամբ նշեց հայ-ֆրանսիական դարավոր կապերի մասին, շնորհակալությամբ հիշատակելով նաև 1988 թ. աղետալի երկրաշարժից հետո Ֆրանսիայի կողմից Հայաստանին ցուցաբերված օժանդակությունը:

Հանդիպման ընթացքում Ամենապատիվ Սրբազանը հյուրերին ներկայացրեց Հայ Առաքելական Եկեղեցու և Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով հաստատված Մայր Տաճարի 1700-ամյա պատմությունը:

Պրն. Ֆուշեի խնդրանքով Տեղապահ Սրբազանն իր մտորումներն ու տեսակետները արտահայտեց վերջին տասնամյակի ընթացքում Հայաստանում ստեղծված կացության և մասնավորապես ղարաբաղյան հակամարտության խնդիրների շուրջ՝ հույս հայտնելով, որ շնորհիվ միջազգային հաշտարար ուժերի և կողմերի միջև խաղաղ երկխոսությունների հակամարտությունը վերջապես կստանա իր արդարացի լուծումը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև առաջիկա կաթողիկոսական ընտրությունների շուրջ:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մամլո դիվանի վարիչ-տնօրեն Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Սեպտեմբերի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց սեպտեմբերի 16-17-ը Երևանում կայանալիք «Ֆրանց Վերֆելը և հայ ժողովուրդը» միջազգային գիտաժողովի մասնակից ավստրիացի հյուրերին՝ ուղեկցությամբ Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Լավրենտի Բարսեղյանի: Այցելուների թվում էին Ավստրիայում գործող «Ֆրանց Վերֆել» կոմիտեի անդամ մի խումբ գիտնականներ, ինչպես նաև Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գրքի թուրքերեն թարգմանության հրատարակիչ Ռագբպ Զարաքոլուն:

Ողջունելով և արդյունավետ աշխատանք մաղթելով գիտաժողովի մասնակիցներին Տեղապահ Սրբազանը անդրադարձավ հայոց ցեղասպանության հարցերին:

«Որքան էլ որոշ ուժեր փորձեն կատարված իրողությունը թաքցնել, ճշմարտությունը երբեք չի կարող թաքնված մնալ: Միշտ էլ ազնիվ և արդարամիտ մարդիկ կգան և պատմության իրական դեպքերը կբացահայտեն», - ասաց Տեղապահ Սրբազանը:

Հանդիպման ավարտին հյուրերը եղան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գանձատանը, ծանոթացան եկեղեցական մեծարվեստ գործերին:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԱՀԿ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Սեպտեմբերի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն ընդունեց ԵԱՀԿ գործող նախագահ, Նորվեգիայի արտգործնախարար Կնուտ Վոլեբեկին և նրա գլխավորած ԵԱՀԿ պատվիրակությանը:

Տեղապահ Սրբազանը ողջունելով հյուրերի այցը Հայոց հոգևոր կենտրոն, նրանց ներկայացրեց Հայ Առաքելական եկեղեցու և աշխարհում քրիստոնեական հնագույն տաճարներից մեկը հանդիսացող Ս. Էջմիածնի պատմությունը:

Հանդիպման ընթացքում պրն. Վոլեբեկը հայտնելով այցի նպատակը, գոհունակությամբ նշեց ՀՀ կառավարական շրջանակներում ունեցած իր հանդիպումների, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ ունեցած քննարկումների մասին: Իր հերթին Տեղապահ Սրբազանը հույս հայտնեց, որ դարաբաղյան խնդիրը խաղաղ բանակցությունների ճանապարհով ի վերջո կստանա իր արդարացի լուծումը:

Հանդիպման ավարտին հյուրերը հետաքրքրությամբ դիտեցին Վեհարանում ցուցադրվող եկեղեցական արվեստի ցուցանմուշները:

Հանդիպմանը ներկա էր Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ